Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 194 - Ա որոշման

«ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է կառուցել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ» թաղամասում մանկապարտեզով բնակելի համալիր և անհատույց հիմունքներով տրամադրել բնակարանները Գյումրի քաղաքի տնակներում ապրող հաշմանդամություն ունեցող, բազմազավակ, ինչպես նաև սոցիալապես անապահով 40 ընտանիքներին
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հանգանակված միջոցներ
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երեւան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, բնագավառը՝ քաղաքաշինություն
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 1,048,187,650 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Գյումրի քաղաքի հաշմանդամություն ունեցող, բազմազավակ, ինչպես նաև սոցիալապես անապահով 40 ընտանիքներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2021 թ. մարտի 15-ից մինչև 2022 թ. օգոստոսի 15-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ժամկետում նախատեսվում է կառուցել Գյումրի քաղաքի «Մուշ» թաղամասում մանկապարտեզով բնակելի համալիր: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2021 թ. մարտի 15-ից մինչև 2022 թ. օգոստոսի 15-ը: Ընդհանուր արժեքը՝ 1,048,187,650 դրամ

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ» թաղամասում մանկապարտեզով բնակելի համալիրի կառուցում՝ 1,048,187,650 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու եւ գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

11.03.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ